

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
Լեզվաբանական հետազոտությունների
գիտական լաբորատորիայի վարիչ
Բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
lingualal51@mail.ru

ՀԱՅ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԷԶԸ

Ժամանակակից հանրագիտական և լեզվաբանական ամենատարբեր բառարանների շարքում նորություն է լեզվաբան Դավիթ Գյուրջինյանի կազմած բառարանների համալիրը (յոթ անուն բառարան), որը հասցեագրված է տարրական դպրոցի և միջին դասարանների աշակերտներին:

Դ. Գյուրջինյանը քաջածանոթ անուն է հայ բանասիրության մեջ: Նա զգալի ներդրում ունի նաև հանրակրթության բնագավառում՝ որպես տարրական, հիմնական և ավագ դպրոցների հայոց լեզվի դասագրքերի հեղինակային խմբի ղեկավար, հրապարակի վրա են մայրենիի 3-5-րդ, հայոց լեզվի 7-րդ և 10-րդ դասարանների դասագրքերը, կազմել է ուղղագրությանը նվիրված բառարան-տեղեկատուներ («Միասին, անջատ կամ գծիկով գրվող բառեր» (առաջին հրատարակությունը՝ 1998), «Մեծատառ, թե՛ փոքրատառ» (2001)), քերականական բառարան-տեղեկատու՝ «Անուն խոսքի մասերի թվի կարգը արդի հայերենում» (2005), հայերենում գործածվող տառային հապավումների բառարանը (Ն. Հեքեքյանի հետ), համահեղինակ է հայերեն առաջին հարցարանների ժողովածուի (Պ. Բեդիրյանի և տողերիս հեղինակի հետ), հեղինակել է նաև Ս. Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի «Հայոց լեզու. խոսքարվեստի դասագիրք» ուսումնական ձեռնարկը (2015), որ ոճագիտության ոլորտի ամբողջական և ավարտուն ուսումնասիրություն է:

Հանրակրթական դպրոցում մայրենի լեզվի հիմքերը դրվում են տարրական դպրոցում և միջին դասարաններում, հետևաբար կարևոր է լեզվի մասին գիտելիքները հաղորդել կանոնարկված ու հաջորդականության սկզբունքով, որպեսզի աշակերտները գաղափար կազմեն ոչ միայն լեզվական համակարգի և նրա կառուցվածքային մակարդակների մասին, այլև տիրապետեն հայերենի ուղղագրության սկզբունքներին, ծանոթանան բառակազմական գործընթացի քայլերին, կառուցեն կապակցված խոսք՝ գործածելով հոմանիշներ, հականիշներ,

դարձվածքներ, կարողանան մեկնաբանել գեղարվեստական բնագրերում հանդիպող «դժվարամարս» բառերի իմաստները, տիրապետեն բարեկիրթ հայերենի հնարներին ու ոճերին և իրենց խոսքում գործածեն դրանք:

Ահա այս խնդիրներն են ընկած Դ. Գյուրջինյանի կազմած դպրոցական բառարանների հիմքում, որ վերջին երկու տարվա ընթացքում գեղարվեստական պատշաճ ձևավորումով լույս է ընծայել «Էդիթ Պրինտ» հրատարակչությունը:

Բառարանագրական շարքի առաջին գիրքը նվիրված է **ուղղագրությանը**: Այն պարունակում է շուրջ 4500 բառ, որ հեղինակը քաղել է «տարբեր առարկաների դասագրքերի վերջում զետեղված ուղղագրական բառացանկերից, այդ դասարանների համար նախատեսված թելադրության ժողովածուներից ու դրանց բառացանկերից, ինչպես նաև ինքնուրույն ընթերցանության ժողովածուներից, օժանդակ ձեռնարկներից, տարատեսակ բառարաններից և այլ սկզբնաղբյուրներից»:

Հայերենի ուղղագրության կարևոր տեղեկատու է Ա. Ղարիբյանի և Գ. Պարիսի (նաև Գ. Շեկյանի) համահեղինակությամբ կազմված բառարանը, որ տասնամյակներ գործել է հանրակրթական դպրոցում, վերջին անգամ վերահրատարակվել 1981-ին: Նմանատիպ բառարաններ հրատարակվել են նաև հետագայում: Դրանք, անշուշտ, օգտակար աշխատանքներ են: Ներկա բառարանը նախորդներից տարբերվում է նպատակադրումով և որդեգրած բառարանագրական սկզբունքներով:

Բառարանը կազմված է մեթոդական ճշգրիտ սկզբունքով. ուղղագրական արժեք ունեցող տառերը տրված են կարմիր տառատեսակով, որպեսզի աշակերտները հեշտությամբ զանազանեն և մտապահեն բառի գրությունը: Ընդ որում, կարմիրով են տրված միևնույն բառի մեջ ուղղագրական տարբեր կանոնների առնչվող (երկու) տառերը, կրկնակ բաղաձայնները, հարադրությունների միության գծիկը և այլն: Բառարանում մերժվում են հանդիպող սխալագրությունները, ինչպես՝ *անձեռոցիկ* (սխալ է՝ *անձեռոցիկ*), *լուսնկա* (սխալ է՝ *լուսընկա*) և այլն: Որոշ դեպքերում ուղղագրությունը հստակեցնելու նպատակով բառի կողքին տրվում է գործածության նմուշ, օրինակ՝ *կարկաչուն* (առվի կարկաչունը) և *կարկաչուն* (կարկաչուն առվակ): Բառարանում հստակ մեկնաբանված են հատուկ և հասարակ գոյականներով համանունական գույքերի իմաստները (ջերմուկ – Ջերմուկ), տրված են անծանոթ բառերի իմաստները, ինչպես նաև հաղորդվում են տարաբնույթ լրացուցիչ տեղեկություններ, որոնց հետևանքով այն դուրս է գալիս ուղղագրական բառարանի շրջանակներից՝ ձեռք բերելով բացատրական, հանրագիտական–հայերենագիտական բառարանի նշանակություն: Մյուս կողմից՝ բառարանը ուսումնական ձեռ-

նարկի արժեք է ձեռք բերում, քանի որ ներկայացնում է լեզվի ուղղագրական կանոնների զգալի մասը:

«Հիշեցում» վերնագրով ներկայացնում է յուրաքանչյուր տառի բառացանկի վերջում:

Բառարանագրական շարքի մյուս գիրքը նվիրված է **բառակազմությանը**: Այն պարունակում է 4000-ից ավելի բառեր՝ քաղված դպրոցական տարաբնույթ դասագրքերից, մանկապատանեկան գրականությունից, հեղինակի կազմած այլ բառարանների բառացանկերից, այլ աղբյուրներից: Հայերենի բառակազմական բառարան մեզանում կազմել է Ս.Գալստյանը (2011), սակայն Դ.Գյուրջինյանի կազմած բառարանն այլ նպատակադրում ունի. այն հետապնդում է ուսուցողական նպատակներ: Հընթացս հեղինակը ցույց է տալիս նաև բառակազմության ժամանակ կատարված (հնչյունական) փոփոխությունները (օրինակ՝ **լույս** արմատի դեպքում՝ **լուսաբաց**– **լույս**–**ա**–**բաց**, **լուսանկար** – **լույս**–**ա**–**նկար**. **ույ**-ը դառնում է **ու**), որոշակի դեպքերում փակագծերում վերականգնվում է անձանաչելիորեն փոփոխված բառամասը (*ձերբազատվել* – ձերբ (ձեն)– ազատ–վ–ել), բացատրվում են գրաբարյան արմատների իմաստները (*արկ*՝ գրաբարյան *արկանել* «զցել, նետել» բայի արմատն է, *արկակոծել*՝ արկ–ա–կոծ–ել. *կոծել* «խփել, հարվածել») և այլն: Բառակազմական սույն բառարանը միաժամանակ բացատրական բառարանի հատկություն ունի. դա անհրաժեշտ է աշակերտներին բառակազմական իմաստաբանությանը ծանոթացնելու առումով: Այսպես՝ համանուն բառերը, որոնք տրվում են համարակալումով, բացատրված են, որպեսզի սովորողները կարողանան իրենց խոսքում տեղին և ճիշտ գործածել, ինչպես՝ **Բան**¹ «խոսք». բանաստեղծ – բան–ա–ստեղծ: **Բան**² «գործ, աշխատանք». բանվոր – բան–վոր և այլն: Հեղինակը աշակերտներին ծանոթացնում է բառակազմական ստուգաբանությանը՝ որոշակի դեպքերում հակիրճ տեղեկություն հաղորդելով բառի ծագման մասին, ինչպես՝ **իմաստ** – կազմված է *իմ* արմատից (իմանալ) և *-աստ* ածանցից:

Բառարանում գործածված է *տե՛ս* հղումը, որի միջոցով կապ է ստեղծվում նույն սկզբունքով կազմված այլ բառերի հետ ևս, միաժամանակ դա սովորողներին մղում է ինքնուրույն աշխատանքի՝ որոնելու և գտնելու համարմատ կազմությունները և մեկնաբանելու դրանցով կազմված բառերի իմաստները:

Բառարանի հեղինակը ճիշտ լուծում է գտել կախյալ արմատներով բառերի կազմությունը մատուցելիս. առանձին չգործածված արմատների կողքին հատուկ նշում է արված (առանձին չի գործածվում), և իբրև օգնություն՝ տրվում են դրանցով կազմված ծանոթ (հայտնի) բառեր, ինչպես՝ **հի** (առանձին չի գործածվում. –ան ածանցով և –ալ մասնիկով՝ **ՀԻՄՆԱԼ**):

Բառարանի վերջում տրված են հայերենի կենսունակ նախածանցների, վերջածանցների ցանկեր՝ ածանցների բառակազմական իմաստների մեկնաբանությամբ և համապատասխան օրինակներով, որոնք բառարանին հաղորդում են ուսումնական ձեռնարկի արժեք (նույնը կարելի է ասել նախորդ ուղղագրական բառարանի մասին):

Հայերենի ուսուցման գործընթացում ուղղագրության և բառակազմության բաժինների գիտելիքներն ամրապնդելուց հետո կարևորվում է բառերի իմաստների բացատրությունը:

Դ. Գյուրջինյանը ուղղագրական և բառակազմական բառարաններում անհրաժեշտության դեպքում է բացատրում բառի կամ արմատի իմաստները, մինչդեռ բառարանագրական շարքի հաջորդ գրքում՝ **բացատրական բառարանում**, լիարժեք ներկայացնում է բառերի բացատրությունը: Դպրոցական բացատրական բառարանի հաջողված օրինակ է Ա. Քոչոյանի աշխատանքը, որը տասնամյակներ առաջ է լույս տեսել (1966):

Դ. Գյուրջինյանի բառարանն ընդգրկում է շուրջ 1000 բառի բացատրություն: Հեղինակն ընտրել է այն բառերը, որոնց իմաստ(ներ)ի իմացությունը կօգնի աշակերտներին ճիշտ հասկանալու խոսքը, ինչպես նաև բառերը ճիշտ և տեղին գործածելով՝ պատշաճ խոսք կառուցելու:

Իբրև գլխաբառեր ընտրվել են ոչ միայն գրական հայերենի բառերը, այլև ժողովրդախոսակցական և բարբառային շերտի որոշ բառամիավորներ, որոնք լայն գործածություն ունեն արդի հայերեն բանավոր խոսքում և գեղարվեստական գրականության մեջ: Հեղինակն աշխատել է բառարան ներառված բառերը ներկայացնել առավելաբար հիմնականիմաստով, թեև անհրաժեշտաբար բացատրվում են բազմիմաստ բառերի տարբեր իմաստները ևս՝ հաշվի առնելով բառարանից օգտվողի հետաքրքրության շրջանակը և իմացության աստիճանը:

Դ. Գյուրջինյանը հիտորեն գործածել է պայմանական նշանները, որոնցից յուրաքանչյուրը սովորողներին ուղղորդում է բառարանից օգտվելու առումով: Այսպես, որոշակի նշանով բառերի բացատրությունից հետո տրվում են նաև բառագործածության նմուշներ՝ բառակապակցություն, նախադասություն (երբեմն՝ գեղարվեստական ստեղծագործություններից): Ինչպես՝ ԲԱԶՄԵԼ – 1. Հանդիսավորնստել: Միասին *բազմած*, Մի շրջան կազմած, Քեֆ էին անում Եվ ուրախանում Մեր հսկա պապերն ու մեր հայրերը (Հովհ. Թումանյան, «Հին օրհնություն»): 2. (փխբ.) Տարածվել, տեղ բռնել: Լեռան ուսին *բազմել էր* վանքը՝ վանականի թիկնոցի պես սև ու խորհրդավոր (Վ. Հարությունյան, «Նաիրյան աստվածներ»):

Գեղարվեստական գրականությունից բնագրային օրինակների վկայումը միջառարկայական կապերի ապահովման միջոց է, որ սովորողների համար տեսանելի է դարձնում հայոց լեզվի և գրականության կապը:

Բառարանի արժանիքներից այն, որ բառիմաստների բացատրությունը հիմնականում ուղեկցվում է նկարներով, որոնք սովորողների մտապատկերում ամրակայում են բառի իմաստն ու նրա առարկայական պատկերը, մյուս կողմից՝ էլ նպաստում են բանավոր խոսքում տարածված օտարալեզու բառերի հայերեն համարժեքները յուրացնելուն:

Աշակերտների բանավոր և գրավոր խոսքի գեղարվեստական հագեցածության չափանիշներից են հոմանիշ և հականիշ բառերի, ինչպես նաև դարձվածքների տեղին գործածությունը: Այդ առումով, Դ. Գյուրջինյանը ձեռնամուխ է եղել նաև սրանց բառարանների ստեղծման աշխատանքներին:

Բառարանագրական շարքի հաջորդ՝ **հայերեն հոմանիշների բառարանն** առավել աշխատատար գործ է. հեղինակը հոմանշային զույգի կամ շարքի անդամների իմաստային վկայությունները ներկայացրել է գեղարվեստական գրականությունից քաղված օրինակներով, որոնք ճաշակով են ընտրված:

Բառարանը պարունակում է հայերենի շուրջ 1300 հոմանիշ բառեր, որոնք խմբավորված են 300-ից ավելի շարքերի մեջ: Ընդ որում, ինչպես նշում է հեղինակը, բառացանկի ընտրությունը կատարված է՝ նկատի ունենալով սովորողների տվյալ խմբի տարիքային, իմացական և այլ առանձնահատկություններ:

Հոմանիշների իմաստային կիրառությունները վկայված են այնպես, որ հստակ արտացոլվի բառի իմաստը կամ գործառական որևէ բնորոշ գիծ: Շատ դեպքերում միևնույն նախադասության (բնագրային վկայության) մեջ գործածված է ոչ միայն գլխաբառը, այլև նրա հոմանիշը կամ հոմանիշները: Ինքնըստինքյան հասկանալի է, թե որքան ջանք է թափել հեղինակը պրպտելու և գտնելու այդպիսի նմուշ-օրինակներ՝ բառարանին հավաստիություն և «գեղարվեստական շունչ» հաղորդելու համար: Հոմանիշների բառարանում ըստ անհրաժեշտության նշվում է բառագործածության ոլորտը, ինչպես՝ ԹՈՒՅՐ (գրքային), ԳԵՀԵՆ (կրոնական, գրքային), ԻՐԻԿՈՒՆ (ժողովրդական, նաև բանաստեղծական), ԳԵՇ (խոսակցական) և այլն:

Հեղինակը հաճախ հոմանշային զույգի կամ շարքի անդամ է վերցնում նաև նույնիմաստ դարձվածային միավորներ՝ այդպիսով սովորողներին ցույց տալով, որ իմաստաբանորեն բառին կարող է համարժեք լինել նաև բառակապակցությունը, ինչպես՝ ԱՉՔԱՄԱԿ -

ԱՆԿՈՒՇՏ - ԸՆԶԱՔԱՂՑ - ԱԶՔԸ ԾԱԿ, ԳՈՌԳՈՌԱԼ - ԳՈՉԵԼ - ՃՉԱԼ - ՉԱՅՆԸ ԳԼՈՒԽԸ ԳՑԵԼ կայլն:

Հումանշային շարքի անդամները մատուցելու յուրահատուկ սկզբունք է որդեգրել բառարանի հեղինակը. հումանշային շարքի չեզոք անդամը տրվում է որպես գլխաբառ, որը չի բացատրվում, ինչպես՝ ԱԶԱՏ, նրան հաջորդում են շարքի անդամները՝ ԱՆԿԱՇԿԱՆԴ, ԱՆԿԱԽ, ԱՆԱՐԳԵԼ, ՊԱՐԱՊ, որոնք բացատրվում են, և որոնց համար բերվում են բնագրային օրինակներ:

Հումանիշների բառարանի վերջում գետեղված է ԲԱՌԱՑԱՆԿ, որտեղ այբբենական կարգով տրված են այն բառերը, որոնք հումանշային գույգի (շարքի) միավոր են (բայց ոչ առաջինը): Սա կոյուրացնի սովորողի գործը՝ փնտրված բառի հումանիշների գույգը կամ շարքը գտնելու:

Տարրական դպրոցի և միջին դասարանների աշակերտներին հասցեագրված բառարանագրական շարքի հաջորդ միավորը **հականիշների բառարանն է**: Բառարանը պարունակում է հայերենում գործածվող հականիշների շուրջ 700 գույգ. ընդ որում՝ գույգի անդամները կարող են լինել բազմիմաստ, որոնք իրենց հերթին ենթադրում են հականշային հարաբերություն այլ բառերի նկատմամբ, որոնք բառարանում դարձյալ տրված են: Հետևաբար բառը մեկից ավելի հականիշներ է ունենում այն պատճառով, որ հականիշ են դառնում տվյալ բառի հումանիշները, ինչպես՝ ԲԱՐԵԿԱՄՍ բառի հականիշն է՝ ԹՇՆԱՄԻ, քանի որ վերջինս ունի հումանիշներ՝ ՀԱԿԱՌԱԿՈՐԴ - ՉԱՐԱԿԱՄ, հետևաբար բառարանում տրվում են ԲԱՐԵԿԱՄ - ԹՇՆԱՄԻ, ԲԱՐԵԿԱՄ - ՀԱԿԱՌԱԿՈՐԴ, ԲԱՐԵԿԱՄ - ՉԱՐԱԿԱՄ հականշային գույգերը՝ համապատասխան բացատրություններով և բնագրային կիրառություններով:

Բառարանում գլխաբառեր են դարձել հիմնականում գրական հայերենի բառերը, սակայն հեղինակն ըստ անհրաժեշտության ներառել է նաև ժողովրդախոսակցական և բարբառային բառեր, որոնք գործածական են առած-ասացվածքներում, ինչպես՝ *հալալ - հարամ, էսօր - էգուց*: Քանի որ հականիշները տրվում են գույգով (ղեմ դիմաց), ուստի նրանց իմաստները հասկանալի են, և բացատրության կարիք չի զգացվում, սակայն որոշակի դեպքերում հարկ է լինում անդրադառնալ որոշ բառերի իմաստների, ինչպես՝ **ՇԻՏԱԿ** (ուղիղ) - **ԾՈՒՌ** (շեղ, թեք), **ՇԻՏԱԿ** (ճշմարիտ, ազնիվ) - **ԿԵՂԾ** (սխալ, անճիշտ, անազնիվ) և այլն:

Սույն բառարանն իր տեսակի մեջ եզակի աշխատանք է. հականիշները ցուցադրվում են միևնույն նախադասության (գեղարվեստական խոսքի) շրջանակներում, որի հետևանքով հականիշների ոճական արժեքն ընդգծված կերպով երևում է: Հականիշներն ստեղծում են պատկերավորման *հակադրություն* հնարը, որի միջոցով միմյանց

հակադրվում են տարաբնույթ հատկանիշներ, գործընթացներ և այլ իրողություններ: Բառարանից վկայենք հականիշների գործածության նմուշներ.

ԲԱԶՈՒՄ (շատ, չափազանց) - **ՍԱԿԱՎ** (քիչ, փոքրաթիվ). *Բազում* են առաքինության քարոզիչները, *սակավ՝* նրա համար նահատակվողները (Ա. Պետրոսյան):

ԹԱՐՄ - ՀԻՆ. Սարերի վրա եկած *թարմ* ձյունը տեղահան էր արել *հին* ձյունի ահռելի հեսանները, որոնք սահել էին գետի մեջ (Ս. Խանգաղյան):

Ուսուցողական նկատառումներից ելնելով՝ բառարանում հականշային զույգի անդամները տրված են կարմիր տառատեսակով, որ առավել տեսանելի է դարձնում խնդրո առարկան և դյուրացնում նրա մտապահումը: Բառարանի վերջում տրված են հականիշների ցանկերը՝ զույային բաժանումով. կարմիր տառատեսակով տրված բառերը հականիշների զույգի առաջին միավորներն են:

Բառարանների շարքի հաջորդ միավորը **դարձվածքների բառարանն է:**

Բառարանի հեղինակը քաջ գիտակցում է, որ կապակցված խոսք կառուցելու հիմքերը դրվում են կրտսեր դպրոցում, դրա կարողությունները ձեռք են բերվում միջին դասարաններում, և աշակերտները հետագա ուսումնառության ընթացքում (հիմնական և ավագ դպրոցում) արդեն տիրապետում են խոսքարվեստի հմտություններին. խոսքարվեստ, որ ներառում է ինչպես պատկերավորման համակարգի բաղադրիչները, այնպես էլ թևավոր խոսքերն ու դարձվածքները, դրանց իմացությունն ու գործածությունը գրավոր և բանավոր խոսքում: Այդ առումով դարձվածքների սույն բառարանը մեծապես նպաստելու է սովորողների գեղարվեստական մտածողության ձևավորմանն ու զարգացմանը, մանավանդ որ դարձվածքների նմուշ-օրինակները քաղված են հայ դասական և ժամանակակից գրականությունից: Բառարանն ընդգրկում է ավելի քան 700 գործածական դարձվածք, որոնք սփռված են մասնագիտական բառարաններում, գեղարվեստական գրականության մեջ և մամուլում: Բառարանում դարձվածքները տրված են այբբենական կարգով՝ անկախ այն բանից՝ դարձվածքի առաջին բաղադրիչը դոմինանտ անդամ է, թե՛ ոչ: Ինչպես՝ ԱԶՔԸ ԾԱԿ, ԱԶՔԸ ԿՊՉԵԼ, ԱԶՔԸ ԿՈՒՇՏ, ԱԶՔԸ ՃԱՍՓԻՆ, ԱԶՔԻ ԸՆԿՆԵԼ և ԱՌԱՆՅ ԱԶՔ ԹԱՐԹԵԼՈՒ, ԳՐԻ ՍԵՎ ՈՒ ՍՊԻՏԱԿԸ ԶՈԿԵԼ և այլն:

Բառարանում յուրաքանչյուր դարձվածքի բացատրությունը տրված է բառով կամ բառակապակցությամբ, ինչպես՝ ԱԶՔԻ ԱՆՅԿԱՅՆԵԼ - թռուցիկ՝ հպանցիկ նայել-կարդալ, թեթևակի նայել-ծանոթանալ: Առավոտյան, գեկույցների թղթապանակն *աչքի անցկացնելիս*, մի բան

ընկավ ձեռքս (Շ.Թաթևյան): Հայրս դուրս եկավ բակ՝ փեթակներն *աչքի անցկացնելու* (Կ. Միմոնյան):

Դարձվածքը բառի նման ևս կարող էրազմիմաստ լինել, ուստի բառարանում բազմիմաստ դարձվածքները համարակալված են արաբական թվանշաններով, և յուրաքանչյուր իմաստի համար բերվում են համապատասխան օրինակներ, ինչպես՝ ԼԵԶՈՒ ԱՌՆԵԼ - 1. Մարդկային լեզվով խոսել: Թեկուզ ծովերից ձկները դուրս գան, *Լեզու աննելով* քեզ գովեն այնքան... (Հովհ. Շիրազ): 2. Խոսելու՝ հակաճառելու համարձակություն ձեռք բերել: Հասարակ զինվորը, մի թշվառ եգիպտացի, *լեզու է անում* անգլիացի մայորի դեմ (Ստ. Ալաջաջյան):

Աշակերտների բառապաշարի հարստացման համար բառարանի հեղինակը տվել է նաև դարձվածային տարբերակները՝ դրանց համար բերելով ընդհանուր բացատրություն, ինչպես՝ ԱԶՔԵՐԸ ԼԱՅՆ ԲԱՅԵԼ - զարմանալ, ապշել: ԱԶՔԵՐԸ ԼԱՅՆ ԲԱՅ ԱՆԵԼ: Կամ՝ ԱԶՔԸ ԿՊԶԵԼ-թեթև քնել: ԱԶՔԸ ԿՊՑՆԵԼ:

Դպրոցի համար այս կարգի բառարան մեզանում գրվել է շուրջ կես դար առաջ. դա լեզվաբան Պ.Բեդիրյանի կազմած «Դպրոցական դարձվածաբանական բառարան» է (1971): Հետագայում հեղինակը կազմեց հայերեն դարձվածքների ֆունդամենտալ բացատրական բառարան (2011):

Դ.Գյուրջինյանի կազմած սույն բառարանն իր տեսակի մեջ եզակի աշխատանք է, և կարելի է լուրջ ներդրում համարել հայ բառարանագրության մեջ:

Քննարկվող բառարանագրական շարքի մեջ ուշագրավ է հատկապես **«Բարեկիրթ հայերենի բառարանը»**: Բառարանում տրվում են «հայերեն բարեկիրթ խոսքում հաճախ գործածվող այն բառերը, բառաձևերը, բառակապակցություններն ու արտահայտությունները, որոնք անհրաժեշտ են տարբեր իրավիճակներում հասակակիցների, հարազատների կամ անծանոթ մարդկանց հետ հաղորդակցվելու համար», - գրում է հեղինակը: Այս կարգի բառարան մեզանում հրատարակվում է առաջին անգամ, և ելնելով բառարանի ուղղվածությունից՝ կարող ենք ասել, որ այն վերաբերում է ոչ միայն տարրական դպրոցի և միջին դասարանների աշակերտներին, այլև ուսանողությանն ու առհասարակ հայերեն խոսող բոլոր մարդկանց, որոնք շփվում են շրջապատի հետ: Սա հայերենի գործածության վարքականոնի բառարան է, նույնիսկ դժվար է այն բառարան անվանել, եթե ոչ՝ ուսումնական ձեռնարկ: Ռուսական իրակա- նության մեջ այս կարգի բառարան հրատարակվել է 2007-ին (А. Г. Балакай, Словарь русского речевого этикета): Ուրախալի է, որ սեղանի վրա ունենք այդպիսի արժեքավոր բառարան: Բառարանը, ի տարբերություն նախորդ աշխատանքների, կազմված է թեմատիկ սկզբունքով, բաղկացած է քսան

թեմատիկ խմբից, ինչպես՝ *բարևել, դիմելաձևեր, հարգանքի հոգնակի, շնորհակալություն, խնդրանք, ներողություն, թույլտվություն, առողջություն, օգնություն, երդում, հրաժեշտ* և այլն: Անշուշտ, հետագայում կարելի է ընդլայնել թեմատիկ խմբերի շրջանակները՝ կազմելով լիակատար բառարան: Սույն բառարանում բառահոդվածները պարունակում են բառի կամ արտահայտության բացատրությունը, հաճախ տրվում են նրանց քերականական-ոճական նկարագրությունը, երբեմն՝ ստուգաբանական տեղեկություններ, որոշակի նշանով ներկայացվում է նրանց կազմությունը՝ կամ ծագումը, այնուհետև բերվում են բնագրային վկայություններ՝ գեղարվեստական գրականությունից կամ ժողովրդախոսակցական լեզվից:

Միանգամայն հասկանալի է, թե որքան աշխատատար գործ է կատարել հեղինակը՝ բնագրային վկայությունները որոնել-գտնելու ճանապարհին: Բարեկիրթ խոսքը կամ լեզվական վարքականոնն առնչվում են խոսքարվեստին, որի բնագավառում, ինչպես նշել ենք, Դ. Գյուրջինյանը զգալի աշխատանք է կատարել՝ 2015-ին հրատարակելով **«Հայոց լեզու. խոսքարվեստի դասագիրք»** աշխատանքը:

Բարեկիրթ հայերենի բառարանում ընդգրկված լեզվական միավորների իմաստները մատուցելուց հետո առանձին ենթակետերով անդրադարձ է կատարվում նրանց կիրառության յուրահատկություններին, բազմիմաստությանը, որոնք մատուցվում են, ինչպես ասացինք, բնագրային վկայություններով: Վկայենք մեկ բառահոդված՝ բառարանի մասին ընդհանուր պատկերացում կազմելու համար:

ԲԱՐԵՎ – Ողջույնի բառ, որն ասվում է հասակակցին, բարեկամին, մտերիմին հանդիպելիս: Հայերեն ողջույնի ամենագործածական բառն է, ասվում է օրվա բոլոր ժամերին:

- *Բարև*-ը գործածում են նաև ծանոթանալիս կամ էլ որպես խոսակցություն սկսելու միջոց:
- *Բարև* ասում են հեռախոսային խոսակցության սկզբում:
- Հաճախ *բարև*-ով սկսում են անձնական նամակները:
- *Բարև*-ին, որպես կանոն, պատասխանում են բարև-ով:
- Հատկապես ուրիշի բարևին պատասխանելիս խոսողը երբեմն կրկնում է *բարև* բառը:
- Խոսակցական լեզվում *բարևին* հաճախ պատասխանում են *հազար բարև* կամ *բարև, հազար բարև*:
- *Բարևի* պատասխանի մեջ ժողովուրդը հաճախ Աստծու անունն է տալիս՝ *Աստծու բարին*:
- Երբ բարևում են մեկից ավելի մարդկանց, ասում են *բարև ձեզ* (գրավոր խոսքում՝ բնականաբար փոքրատառ):

- *Բարի* բառի գրաբարյան գործիական հոլովն է *բարեալ* (բարյավ), այսինքն՝ «բարով»: Հնչյունափոխվելով դարձել է *բարև*:

Նկատենք, որ այս կարգի բոլոր բացատրություններին հաջորդում են բնագրային օրինակներ, որոնք չենք վկայում՝ տեղի խնայողության նպատակով:

Յուրաքանչյուր թեմատիկ խմբի վերջում հեղինակը խորհուրդներ է տալիս բառարանից օգտվողներին:

«Բարեկիրք հայերենի բառարանը», կարծում ենք, պետք է լինի բոլորի սեղանի գիրքը՝ որպես խոսքի էթիկայի և խոսքարվեստի ուղեցույց:

Այս բառարանով ավարտվում է տարրական դպրոցի և միջին դասարանների աշակերտներին հասցեագրված բառարանագրական շարքը՝ թվով յոթ աշխատանք, որոնք բոլորը միասին կազմում են մեկ ամբողջություն՝ ներկայացնելով ուղղագրությունը, բառակազմությունը, իմաստաբանությունը, դարձվածանին և խոսքարվեստը:

Խորհուրդ կտայինք հեղինակին ընդլայնել օգտակար բառարանների այս շարքը և աշակերտներին (նաև ուսանողությանը) ներկայացնել արդի *փոխառությունների և շրջասությունների* ուսումնական բառարաններ:

Իբրև ամփոփում կարող ենք ասել, որ Դ.Գյուրջինյանի կազմած բառարանագրական համալիրը նոր էջ է բացում արդի հայ ուսումնական բառարանագրության մեջ, ունի տեսական ու գործնական կարևոր նշանակություն և կարող է նպաստել ոչ միայն տարրական ու միջին դասարանների հայոց լեզվի ուսուցման գործընթացին, այլև բավարարել բարձր դասարանների աշակերտության և ուսանողության պահանջները՝ հայերենը համակողմանիորեն յուրացնելու ճանապարհին: Մյուս կողմից՝ կարճ ժամանակահատվածում այս տիտանական աշխատանքը կատարված է հայերենի ուսուցումը լիարժեք ու անթերի տեսնելու ձգտումով, ինչպես նաև հայերենն անխաթար գործածելու ու մաքուր պահելու մտահոգությամբ, որ Դ.Գյուրջինյանի՝ ՀՀ Լեզվի կոմիտեի նախագահի մասնագիտական և պաշտոնական վարքագիծն է: